

նիւթերի քանակը այլ մարդկային մտքի գործունէութեան աստիճանը և այն ազնիւ և բարձր զգացմունքները, որ արտայայտուած է հեղինակը Աստուածային ներշնչման քանակով, որը արտայայտուած է վէպի մէջ: Այս է Սերվանտէսի մատուցած ծառայութիւնը:

Կարդալով այս անմահ վէպը, մարդկային շատ սերունդներ հրճուում էին, մխիթարուում, զբաղւում, ներշնչւում բարեսրտութեան և խղճի լաւ և բարձր զգացմունքներով:

Ա. Վ.

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՐԱԴԻՆ՝ ԻՆՁՊԷՍ ԵՐԿՐԻ ՏԱՔՈՒԹԵԱՆ ԱՂԲԻԻՐ, «Harpers Magazine» ուս այս հետաքրքրական վերնագրի տակ զետեղուած է պրօֆ. Բուզիրֆորդի գիտական յօդուածը: Նա հաւատացնում է, որ թէպէտև տաքութեան մի մասը առաջ է գալիս զանազան քիմիական միութիւններից, բայց տաքութեան մեծագոյն մասը ստացւում է այն մարմիններից, որոնք ընդունակ են մեծ քանակութեամբ տաքութիւն արտադրել: Մի տարրուայ ընթացքում, ասում է նա, մէկ ֆունտ բաղին նոյնքան տաքութիւն է տալիս, որքան կարելի է ստանալ 100 փութ ամենալաւ ածուխ այրելուց: Այդ ժամանակամիջոցից յետոյ բաղին պահպանում է իր առաջուայ ոյժը և այդ կտեւէ հարիւրաւոր դարեր: Բաղի պարունակող մարմինները ցրուած դրութեան մէջ են թէ օդի և թէ երկրագունդի պատեանի մէջ: Այժմ հարց է առաջանում, թէ որքան մեծ է այդ նիւթի քանակը և թէ ըաւական է արդեօք երկրային տաքութիւն առաջացնելու համար: Պրօֆ. Բուզիրֆորդը ասում է որ կարելի է դրական պատասխան տալ, որովհետև եթէ մէկ գրամ բաղին այնքան տաքութիւն է տալիս, որ կարելի է եռցնել 100 գր. ջուր (1° ց.) ուրեմն հասարակ հաշիւը ցոյց է տալիս, որ երկրից արտադրուող տաքութիւնը կարելի է ստանալ 270 միլլիօն տոնն բաղից: Ուրեմն կարելի է համարձակ ենթադրել, որ եթէ բաղին հաւասարաչափ է տարածուած երկրագունդի պատեանի մէջ, այն ժամանակ վերևը յիշուած մօտաւոր թիւը շատ չնչին մասն կլինի այն բոլորի, ինչ որ երկրագունդը պարունակում է իր մէջ:

ՆՇԱՆԱԻՈՐ ՊԵՂՈՒՄՆԵՐ: Նորերուս Անգլիացի Թէոզոլոգ Դէվիլը նշանաւոր հնախօսական գիւտեր է արել Եգիպտոսում: Փետրուարի 12-ին Դեւիսի առաջնորդութեամբ բանող բանուորները Բամզէս IV և Բամզէս XII յայտնի գերեզմանների մէջ

մի քարէ սանդուխ նկատեցին և մաքրելով տեսան, որ այդ սանդուխը տանում էր ուղղակի կայսերական գերեզմանատուն։ Գերեզմանատան դուռը փակուած է եղել քարերով. երբ քարերը հեռացրել են, Դէվիսը նկատել է մի երկրորդ սանդուխ, որը միացած է եղել առաջինի հետ կրաղիւսով, այդ կրաղիւսի վրայ պահպանուել են կայսերական կնիքի հետքեր։ Միւս օրը հանդիսաւոր կերպով բաց են արել գերեզմանատան դուռը Կոննառուտցի դուքսի և սլոֆ. Մասպէրօի ներկայութեամբ։ Գերեզմանատանը երեւացել են երկու գերեզմաններ, ամբողջապէս խիստ արուեստական ոսկէ թիթեղով ծածկուած. ծածկուած չեն եղել միայն այն մասերը, որտեղ հանգուցեալների դէմքերն են նկարագրուած եղել, իսկ իրանք մուխաները ծածկուած են սև քողով։ Ուրիշ գտնուած իրեղէններից առանձին ուշադրութիւն են գրաւում լաւ պահպանուած շքեղ ու թանկագին դարդարանքներով երկանիւ կառքը, ինչպէս նաև եղների սարքերը։

Գերեզմանների տապանագիրները ցոյց են տալիս, որ այդտեղ թաղուած են Սա և Տուա յալտնի Թէա թագուհու ծնողները, իսկ վերջինս, ինչպէս ենթադրում են, հերետիկոս Փարաւոն-Ամօն-Գօտեպա-Տուաի մայրն է եղել։

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ